«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ:

ԱՌԱՐԿԱՆ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԳԼՈՒԽ 1. ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, «ԵՍ և ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ..... 5

ԳԼՈՒԽ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ..... 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....30

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մեր հասարակական կյանքում ընթացող քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև բարոյաարժեքային ոլորտում կատարվող փոփոխությունները նոր խնդիրներ են առաջադրում հանրակրթական դպրոցին՝ կապված աճող սերնդի կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման և արժեքային կողմնորոշումների ձևավորման անհրաժեշտության հետ:

Կյանքի առաջանցիկ զարգացումները թելադրում են նոր պահանջներ և մոտեցումներ հանրակրթական առարկաների հատկապես մայրենիի, մաթեմատիկայի, բնագիտության, պատմության բովանդակության նորացման և դրանց միջոցով սովորողներ արժեհամակարգի և ընդհանրապես արժեքային-գնահատողական վերաբերմունքի ձևավորման նկատմամբ:

Տարրական դպրոցում սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում մեծ ներուժ ունեն մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ առարկաները, «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը:

Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը դիտարկվել է մի շարք գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի, մաթեմատիկայի, էկոլոգիայի տեսանկյուններից:

Արժեհամակարգի, արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը հետազոտվել է Ե. Վ. Բոնդարևսկայայի, Ն. Բ. Կռիլովայի, Մ. Ս. Կագանի, Վ. Ա. Սլաստյոնինի, Կ. Ռոջերսի, Լ.Թ.Ասատրյանի, Հ.Ս. Միքայելյանի, Ռ.Ա. Մարդոյանի, Լ.Վ.Թորգոմյանի, Ա.Լ. Տոնոյանի և այլոց կողմից:

Այնուհանդերձ, այսօր, դեռևս, մնում են լիարժեք չբացահայտված մայրենի, մաթեմատիկա, «Ես և շրջակա աշխարհը» առարկաների արժեքային ներուժը՝ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից:

Սրանով է պայմանավորված մեր ավարտական աշխատանքի թեմայի ընտրությունը՝ «Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձեվավորման մեթոդներն ու միջոցները»:

Հետազոտական աշխատանքի նպատակն է տեսականորեն և փորձարարությամբ հիմնավորել մայրենի, մաթեմատիկա, «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ» առարկաների արժեքային ներուժը և ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների արդյունավետ ձևավորման մեթոդներն ու միջոցները:

Ավարտական աշխատանքի խնդիրներն են.

1. Վերլուծել անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գրականությունը, բնութագրել թեմային վերաբերող հիմնական հասկացությունները:
2. Տեսականորեն և փորձարարությամբ հիմնավորել մայրենի, մաթեմատիկա, «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ» առարկաների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման միջոցները:

ԳԼՈՒԽ 1

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրին նվիրված տեսական մոտեցումների վերլուծությունը

Վերջին շրջանում հայրենական և արտերկրյա գիտնականները մեծ ուշադրություն են դարձնում անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման խնդրին:

Փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական, գրականության վերլուծությունը թույլ է տալիս նկատել, որ չնայած հիմնախնդրի նկատմամբ մոտեցումների բազմազանությանը, այնուհանդերձ այդ մոտեցումներում և տեսակետներում առկա է մեկ հիմնական մոտեցում՝ արժեքային համակարգի ձևավորվածության մակարդակով են պայմնավորված անձի դիրքորոշումները, աշխարհայացքը և ընդահանուր վերաբերմունքն իրականության նկատմամբ:

Արժեքային համակարգը և արժեքային կողմնորոշումները առաջատար դեր են խաղում անձի և հասարակության փոխհարաբերություններում՝ ընդգրկելով կյանքի հոգևոր և նյութական բոլոր ոլորտները: Սկզբնապես ձևավորվելով որպես սուբյեկտիվ գնահատման արդյունք՝ հետագայում արժեքները ձեռք են բերում համեմատաբար ինքնուրույն արտահայտություն:

Գիտական գրականության մեջ կան «արժեք», «արժեքային կողմնորոշումներ» հասկացությունների տարբեր մեկնաբանումներ:

Փիլիսոփայական տեսություններում (Վ.Ա.Բիբլեր, Բ.Մ.Բիմ-Բադ, Գ.Պ. Շչեդրովիցկի, Վ.Պ. Տուգարինով, Օ.Գ. Դրոբնիցկի, Վ.Մ. Ռոզին, Վ.Ա.Յադով) արժեքները սահմանվում են որպես գործունեության կարգավորիչներ, նորմատիվներ, արժեքներ-նորմեր, արժեքներ-իդեալներ, արժեքներ-նպատակներ, արժեքներ-

միջոցներ: Արժեքային կողմնորոշումներ հասկացությունը հարաբերակցվում է նորմ, արժեք հասկացություններին:

Հոգեբանամանկավարժական գիտությունների տեսանկյունից արժեքն առնչվում է անձի ձևավորմանն ու դաստիարակությանը, վարքին ու գործունեությանը (Բ. Ի. Դոդոնով, Ա. Ա. Լեոնտև, Ա. Ն. Լեոնտև, Ն. Ա. Ռոզով, Ս. Լ. Ռուբինշտեյն, Լ.Թ.Ասատրյան, Հ.Ս.Միքայելյան, Ռ.Ա.Մարդոյան, Լ.Վ.Թորգոմյան, Ա.Լ.Տոնոյան և այլք) :

Արժեքի հիմնախնդրով զբաղվում է արժեբանությունը, որն ուսումնասիրում է արժեքների և այդ ոլորտում առկա հասկացությունների ձևավորման փիլիսոփայական-մեթոդաբանական հիմքերը և դրա զարգացման առանձնահատկությունները պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում:

Ըստ Է.Բ. Աղայանի՝ «արժեքը մնայուն նշանակություն ունեցող գործ է, ստեղծագործություն, ավանդ, ներդրում, իրական հատկանիշ, արժանիք »[1, էջ 132], իսկ ըստ Լ.Վ.Թորգոմյանի՝ «այն առարկա է, երևույթ, սոցիալական վարքի նորմ, որը կարող է ծառայել որևէ պահանջմունք բավարարելու համար» [10, էջ 53]:

Յուրաքանչյուր քաղաքակրթություն ունի իրեն հատուկ սոցիալական, բարոյական, էկոլոգիական, իրավական, գեղագիտական և այլ արժեքները, որոնք կողմնորոշում են անհատներին և կարգավորում նրանց վարքագիծը:

Ընդհանրապես արժեքային պատկերացումները վերաբերում են բարոյական գիտակցության բնագավառին, ընդգրկում են բարոյական նորմաները, նորմերը, սկզբունքները, իդեալները, բարու և չարի, արդարության, երջանկության հասկացությունները:

Պրոֆեսոր Հ. Ս. Միքայելյանի կարծիքով. «Արժեքները շրջապատող աշխարհի օբյեկտների հատուկ սոցիալական որոշարկումներ են, որոնք բացահայտում են նրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար: Արտաքուստ արժեքը հանդես է գալիս որպես առարկայի կամ երևույթի հատկություն, սակայն հատուկ է օբյեկտին ոչ թե ի բնե, ոչ թե ինքնին վերցրած օբյեկտի ներքին կառուցվածքիի շնորհիվ, այլ որքանով այդ օբյեկտը ներքաշված է

մարդու հասարակակաբն կեցության ոլորտի մեջ և դարձել է որոշակի սոցիալական հարբերությունների կրող» [15, էջ 41-42]:

«Արժեք» հասկացության էության բնորոշման տարբեր տեսակետներ կան, որոնցում հատկապես առանձնացվում են տեսակետների երկու խումբ:

Առաջին խմբին են վերաբերում այն տեսակետները, որոնք առնչվում են մարդու և հասարակության համար կարևոր արժեքների գնահատման հետ:

Ըստ երկրորդ խմբի տեսակետի արժեքները պատկանում են «բանականության

Վ.Ա.Սլաստենինը, Գ.Ի. Չիժակովան գտնում են, որ «արժենքները համարվում են մարդու գործունեության և վարքի կողմնորոշիչը, միայն այն դեպքում երբ ամբողջականորեն ձևավորված են նրանց արժեքային կողմնորոշումների գիտակցումը, հարաբերությունները և դիրքորոշումները, որոնք արտացոլում են անձի գործունեության և վարքի մեջ արժեքների ուղղվածությունը, իսկ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում մարդը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և հարաբերություններով» [44, էջ 119]:

Իսկ Լ.Թ.Ասատրյան նշում է, որ. «վերջին ժամանակներս փորձեր են անում հիմնավորելու, որ էկոլոգիական գիտելիքների ձեռքբերման ընթացքում ձևավորվում են սովորողների արժեքային կողմնորոշումները» [3, էջ 54]:

Ռուս հետազոտող Վ.Ա.Յադովի կարծիքով, արժեքային կողմնորոշումները ունեն իրենց կառուցվածքային բաղադրիչները: Այն ներառում է ճանաչողական բաղադրիչը, որն արտացոլում է անձի սոցիալական փորձը, հուզական բաղադրիչը բնութագրում է անձի վերաբերմունքը արժեքների նկատմամբ, և բացահայտում այդ վերաբերմունքի բովանդակությունը: Վարքային բաղադրիչը պարունակում է կոնկրետ իրավիճակի գործողությունների պլանը:

Արժեքները ներառում են անձի հասարակության կողմից ընդունված արժեքները, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն և արժեքային կարևոր գործառույթներ են իրականացնում, այսինքն՝ մեծ դեր են խաղում անձի կողմնորոշումների և վարքի ձևավորման ուղղությամբ:

Ռուս հոգեբան Դ.Ա. Լեոնտևը տարբերակում է անձնային և սոցիալական արժեքները: Իստ նրա «արժեք» հասկացությունը վերաբերվում է երևույթների երեք տարբեր խմբերի՝

1. հասարակական իդեալներ՝ մշակված հասարակական գիտակցության կողմից, որոնցում խտացած են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կատարելության ու ներդաշնակության մասին առկա պատկերացումները,
2. այդ իդեալների առարկայական մարմնավորումը առանձին անհատների արարքներում և ստեղծագործություններում,
3. անձի դրդապատճառային կառուցվածքը, սեփական վարքում և գործունեության մեջ հասարակական արժեք ունեցող իդեալների առարկայական մարմնավորման նրա ձգտումը [37]:

«Արժեքային կողմնորոշում» հասկացության բնորոշման ուղղությամբ ևս գիտնական հետազոտողները միասնական մոտեցում չեն ցուցաբերում: Ըստ Լ. Թորգոմյանի «Արժեքային կողմնորոշումները հասարակական արժեքների (վարքի նորմերի, իդեալների) նկատմամբ անձի ընտրական վերաբերմունքն է, որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում: Դրանք իրենց բնույթով հատուկ տեսակի կայուն դիրքորոշումներ են, որոնք ընկած են անձի հավակնությունների մակարդակի հիքում» [10, էջ 26]: Արժեքային կողմնորոշումները կազմում են անձի դրդապատճառային-պահանջմունքային ոլորտը, դրանք գործունեության և վարքի կողմնորոշիչներ են, արժեքային գիտակցությունն ու հարաբերությունները:

Այսպիսով ընդհանրացնելով դիտարկված հայեցակարգային մոտեցումները՝ հանգում ենք այն հետևությանը, որ արժեքային կողմնորոշումները բնութագրվում են սոցիալ-հոգեբանական այնպիսի որակների ամբողջություն, որոնք անձի գործունեության տվյալ ոլորտում կարգավորում են նրա վարքը:

Այսպիսով՝ «արժեքային կողմնորոշումներ» հասկացության բնութագրման համար ուշագրավ են հետևյալ հատկանիշները՝

1. արժեքային կողմնորոշումները բնորոշվում են սուբյեկտի գիտակցությամբ (կամ ենթագիտակցությամբ),
2. արժեքային կողմնորոշումները արժեքների սուբյեկտիվ աստիճանականության ամբողջությունն են. անձի արժեքային կողմնորոշումները կարող են ոչ միայն չհամապատասխանել, այլև հակասել այդ արժեքներին, որոնք ընդունված են հասարակության տվյալ խմբում,

3. արժեքային կողմնորոշումները բնորոշվում են սուբյեկտի գիտակցությամբ (կամ ենթագիտակցությամբ),
4. արժեքային կողմնորոշումները արժեքների սուբյեկտիվ աստիճանականության ամբողջությունն են. անձի արժեքային կողմնորոշումները կարող են ոչ միայն չհամապատասխանել, այլև հակասել այդ արժեքներին, որոնք ընդունված են հասարակության տվյալ խմբում,
5. արժեքային կողմնորոշումները անմիջական ազդեցություն ունեն սուբյեկտի գործունեության վրա և ձևավորում են նրա վարքի դրդապատճառները:

Թվարկված հատկանիշների հաշվառմամբ կարելի է արժեքային կողմնորոշումները սահմանել որպես անձի կողմից արժեքների աստիճանական յուրացում, որը որոշում է նրա գործունեության դրդապատճառները:

Այսպիսով, տարրական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի և արժեքային կողմնորոշումների ձևավորումը նաև սոցիալական նշանակություն ունեցող արժեքների յուրացման գործընթաց է, որը հարստացնում է նրանց հոգևոր աշխարհը և նպաստում է նրանց ամբողջական զարգացմանը:

Անձի արժեքային կողմնորոշումների բնութագրմանը նվիրված գրականության մեջ առանձնացվում են անձնային, սոցիալական, գեղագիտական, էկոլոգիական արժեքները:Հասարակության կողմից ընդունված արժեքների ճանաչումն ու գնահատումը աճող սերնդին ազգային ու համամարդկային մշակույթի յուրացման հնարավորություն է ընձեռում: Լ. Մ. Արխանգելսկին նշում է, որ մարդը սոցիալ-մշակութային միջավայրում կերտում է ինքն իրեն՝ այդ արժեքները դարձնելով իր հոգևոր ներաշխարհի անհրաժեշտ բաղկացուցիչները [27]:

«Արժեքային կողմնորոշումները բնորոշում են հասարակական արժեքների (վարքի նորմերի, իդեալների) նկատմամբ անձի ընտրական վերաբերմունքը, որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում:

Դրանք իրենց բնույթով հատուկ տեսակի կայուն դիրքորոշումներ են, որոնք ընկած են անձի հավակնությունների, ձգտումների, պահանջմունքների հիմքում» [15, էջ 119]:

Արժեքային կողմնորոշում հասկացության կառուցվածքային բաղադրիչներ են համարվում արժեքային գիտակցությունը, արժեքային վարքը, արժեքային դիրքորոշումը, արժեքային ուղղվածությունը, արժեքային հարաբերությունը, արժեքային վերաբերմունքը և այլն:

Արժեքային դիրքորոշումը ըմբռնվում է որպես անձի որոշակի կենսադիրքորոշում, որին համապատասխան ձևավորվում ու իրականանում են նրա մտքերը, զգացմունքները:

Տարրական դպրոցում մայրենի, մաթեմատիկայի, «Ես և շրջակա աշխարհը» «Կերպարվեստ» առարկաների ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումը իրականանում են դրանց համակարգման հիման վրա:

Վ.Պ.Զինչենկոն անձի գործունեության երեք հիմնական բնագավառների առանձնացման հիման վրա առաջարկում է հետևյալ արժեքային խմբերը որոնց ձևավորումը իրականացվում է մանկավարժական գործընթացում.

- հոգևոր,
- իմացական,
- սոցիալական [31, էջ 8]:

Ռուս գիտնական Ն.Ս.Ռոզովը առանձնացրել է կրթության ոլորտի գիամար նշանակալի հետևյալ արժեքները.

- մարդասիրական արժեքներ, որոնք վերաբերվում են մարդու իրավունքներին և արժանապատվությանը,
- սոցիալական արժեքներ, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական և իրավական ոլորտում,

- մշակութային արժեքներ, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին, բարոյականությանը, ազգային և էթինիկ ավանդույթներին,
- էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջապատող միջավայրին, կենսաբանական բազմազանությանը [42, էջ 162]:

Այս դասակարգման թերությունը այն է, որ իմացական արժեքները չեն առանձնացված:

Ս.Ի.Մասլովի կողմից առաջարկվող դասակարգման մեջ առանձնացվել են արժեքների հետևյալ խմբերը՝

- բարոյական,
- իմացական,
- կրոնական,
- գեղագիտական,
- սոցիալական,
- բարոյակամային,

- նյութական [38, էջ 88]:

Այս մոտեցումը ցույց է տալիս, թե ինչպիսի արժեքներ կարող են գերակայել տարրական դպրոցում ուսումնասիրվող առարկաների ուսուցման գործընթացում, և որ արժեքներին են հաղորդակցվում կրտսեր դպրոցականները:

Այդ գործընթացը մեծ չափով հիմնվում է նաև ժողովրդական մանկավարժական մշակույթի և ավանդույթների վրա:

Կրտսեր դպրոցական տարիքը ունի իր առանձնահատկությունները և բնութագրվում է ճգնաժամային փուլերով և նորագոյացություններով: Այս տարիքում ձևավորվում են վարքի և գործունեության նոր մեխանիզմներ, դրդապատճառներ, պահանջմունքներ, տարաբնույթ հետաքրքրությունները, որոնց շնորհիվ կայուն հիմք է ստեղծվում բարոյական որոշակի նորմերի յուրացման համար: Այս տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է, որի ընթացքում ձևավորվում է գնահատողական վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, որում էական նշանակություն ունեն երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, անկեղծությունը:

Կրտսեր դպրոցականի նորագոյացություններից մեկն այն է, որ նա ստանձնում է սոցիալական նոր՝ աշակերտի դեր: Կրտսեր դպրոցականը գիտակցում է իր սոցիալական «Ես»-ը, ձգտում է իր տեղն ու դերն ունենալ շրջապատում, ինքնահաստատվել, ակտիվ վերաբերմունք է դրսևորում դրականի ու բացասականի, արդարի ու անարդարի, բարու և չարի նկատմամբ, գիտակցում է իր և դիմացինի արժեքային արարքները: Երեխան դպրոց է գնում նորի սպասումով, գիտակցում է իր տեղը ուսուցիչների ու ընկերների հետ ունեցած հարաբերություններում, գնահատում է հաջողությունները և դրսևորում համարժեք վարք: Ուստի այս տարիքում պետք է աջակցել երեխային և զարգացնել գիտելիքների՝ կարևոր ու արժեքավոր լինելու ըմբռնում՝ դասավանդվող առարկաների գրավիչ կողմերի ակնառու ցուցադրմամբ: Դա նպաստում է ոչ միայն իմացական հետաքրքրությունների, այլև արժեքային գնահատողություններ անելու կարողությունների ձևավորմանը:

Եթե 1-2-րդ դասարաններում երեխաները գործում են ուսուցչի ուղղակի ցուցումների հիման վրա, ապա 2-րդ դասարանի վերջում և 3-րդ դասարանում աշակերտների վարքում ի հայտ են գալիս ինքնակարգավորման, սեփական արարքները վերլուծելու, համեմատելու, հակադրելու, գնահատելու կարողություններ:

Հետազոտողները նշում են, որ ուսուցման առաջին շրջանում երեխայի մեջ ձևավորվում են նոր պահանջմունքներ, դրդապատճառներ, որոնք ձևավորում են արժեքային նոր պատկերացումներ: Եթե ուսուցման սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականն ունի կոլեկտիվ աշխատանքի, համերաշխության, փոխըմբռնման, համատեղ խաղերի, շփումների ու հաղորդակցման նախնական պատկերացումներ, ապա տարրական դպրոցն ավարտելիս նրա մեջ ձևավորված են վարքի կառավարման ավելի կատարյալ միջոցներ ու եղանակներ՝ հիմնված իմացական, հուզական և կամային գործընթացների միասնության վրա: Դրանք էլ հենց որոշում են երեխայի մղումը՝ առաջնորդվել ոչ միայն սեփական ցանկություններով ու դրդապատճառներով, այլև խմբի ու կոլեկտիվի հետաքրքրություններով:

Կրտսեր դպրոցականի արժեքային կողմնորոշումները որոշ չափով ձևավորված են, սակայն տակավին անկայուն և արժեքների տարերային նախընտրությամբ: Քանի որ, կրտսեր դպրոցականների սոցիալական փորձը հարուստ չէ և սահմանափակվում է սոսկ նրա կենսափորձի շրջանակներում, ուստի նա չի կարող լիարժեքորեն ընկալել և իմաստավորել արժեքային գերակայությունները: Ահա թե ինչու կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման համար պետք է մեծ ուշադրություն հատկացվի առհասարակ արժեքների վերաբերյալ նրա պատկերացումների ընդլայնմանը:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մեջ գերակշռում են այնպիսի արժեքներ, որոնք մարմնավորում են ազնվությունը, բարությունը, գթասրտությունը, ճշտապահությունը, կազմակերպվածությունը, կարգապահությունը, սերն ու նվիրվածությունը ընտանիքի և ուսուցչի նկատմամբ, որը հաճախ վախից, ցավից ու

մենակությունից խուսափելու արտահայտություն է: Կրտսեր դպրոցականի համար մեծագույն արժեք են ուսուցիչը, ծնողները, հաղորդակցումը, շրջապատի կողմից գնահատված լինելը, խրախուսանքը, որոնք նրանց մեջ հաղթահարում են տարբեր բարդույթներ [39, էջ 96]:

Կրտսեր դպրոցականի արժեքային պատկերացումներն առավելապես կայունանում են ուսումնական գործընթացում: Տարրական դպրոցում նրա համար ձևավորվում է սոցիալական նոր միջավայր: Կրտսեր դպրոցականը ուսման միջոցով ճանաչում է աշխարհը, բնության գեղեցկությունները, մարդկային փոխհարաբերությունները:

Մայրենի, մաթեմատիկա և «Ես և շրջակա աշխարհը» առարկաների դասավանդումն ունի ինչպես դիդակտիկական, այնպես էլ դաստիարակչական կարևոր նշանակություն:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը նշված առարկաների ուսուցման գործընթացում իրականանում է երեք հիմնական ուղղություններով՝ խոսքային գործունեության ընթացքում, գրական տեքստերի շուրջ աշխատանքների, մաթեմատիկական, էկոլոգիական ուղղվածությամբ առաջադրանքների միջոցով՝ գիտելիքների յուրացման, կարողությունների ու հմտությունների տիրապետման գործընթացում:

Անգնահատելի է մայրենիի դերը կրտսեր դպրոցականների արժեքային կողմնո-րոշումների ձևավորման գործում, որովհետև այն առաջին հերթին նպաստում է անձի հոգևոր-բարոյական ոլորտի զարգացմանը և ձևավորմանը:

Մաթեմատիկայի յուրացման առանձնահատկությունը այն է, որ նա հանդես է գալիս որպես այլ առարկաների ուսուցման հիմք և կարևոր դեր է կատարում սովորողների մաթեմատիկական, տրամաբանական, գրաֆիկական մտածողության, աշխարհաճանաչողության, արտաքին տեղեկատվության ընկալման և ընդհանուր զարգացման մեջ:

Սովորողների կողմից արժեքների յուրացման և արժեքային կողմնորոշումների ձևավորման արդյունավետությունը կարող է ապահովվել միայն ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ, հատկապես փոխներգործուն մեթոդների, ուսուցման պրոբլեմային, համագործակցային, խաղային տեխնոլոգիաների:

Այսպիսով, ընդհանրացնելով դիտարկված հայեցակարգային մոտեցումները, հանգում ենք այն հետևության, որ արժեքային կողմնորոշումները բնութագրվում են որպես սոցիալ-հոգեբանական որակների ամբողջություն, որը կարգավորում է անձի վարքը: Այսինքն՝ կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորումը տնդհանում է արժեքների յուրացումից անցումը արժեքային կողմնորոշումների ձևավորմանը, ուստի տարրական դպրոցում սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորումը ուսուցչի կողմից պետք է դիտարկվի որպես մանկավարժական աջակցության միջոցների համալիր:

ԳԼՈՒԽ 2

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման ուղղությամբ իրականացրած փորձարարական հետազոտության կազմակերպումը

Մեր հետազոտական ավարտական աշխատանքի նպատակն է եղել ստուգել ուսումնական առարկաների դասագրքերում ընդգրկված արժեկողմնորոշիչ թեմատիկ նյութերի, տեքստերի, վարժությունների ու առաջադրանքների ազդեցության արդյունավետությունը կրտսեր դպրոցականի արժեքայիյն կողմնորոշումների ձևավորման վրա:

Մինչև հարցաթերթիկների բաժանումը անցկացվել են զրույցներ հարցաշարում ներկայացված արժեքների իմաստների շուրջ, կատարվել է բացատրական աշխատանք, տրվել են ցուցումներ:

Դպրոցականները պետք է նշեին իրենց նախընտրած արժեքները կամ դրանց վերաբերյալ իրենց կարծիքները: Արժեքներն ընտրելիս աշխատել ենք ընդգրկել դպրոցականի կենսագործունեության, մարդկային հարաբերությունների բոլոր ոլորտները, բարոյական և գեղագիտական պատկերացումներն արտացոլող հասկացություններ: Մեր նպատակն է եղել նաև բացահայտել, թե այս կամ այն արժեքի նախընտրությունն ինչպիսի դրդապատճառներով է թելադրված, գիտակցու՞մ են, արդյոք, տվյալ հասկացության նշանակությունը, թե՞ պատասխանը մեխանիկորեն են գրում:

Հարցումներին մասնակցած կրտսեր դպրոցականներին առաջարկվել են հետևյալ արժեքները և խնդրվել է ընտրել դրանցից ցանկացածը:

Հարցաշար 1

Առաջին խումբ.

- Աշխատասիրություն,
- Հայրենիք
- Բարեկիրթ վերաբերմունք դպրոցում, տանը, հասարակական վայրերում,
- Պատասխանատվություն
- Ընկերասիրություն
- Ուսումնառություն դպրոցում
- Ընթերցասիրություն, սեր դեպի գիրքը
- Համակարգչային խաղեր,
- Սեր դեպի բնությունը, հոգատարություն կենդանիների նկատմամբ
- Հաղորդակցում ընտանիքում, հասակակիցների հետ
- Ազգային խորհրդանիշների իմացություն
- Կարգապահություն,
- Ճշտախոսություն,
- Ազնվություն
- Արվեստի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրասիրություն
- Բարձր առաջադիմություն
- Համագործակցություն,
- Հանդուրժողականություն

Երկրորդ խումբ

- Ճշտապահություն,
- Աշխատասիրություն,
- Հայրենասիրություն,
- Ընթերցասիրություն ,
- Հարգանք այլոց նկատմամբ,

- Ընթերցասիրություն,
- Հոգատարություն,
- Քաղաքավարություն,
- Այլոց սխալները ներելու կարողություն,
- Մարդասիրություն,
- Կարգապահություն,
- Հումորի զգացում,
- Հանդուրժողականություն,
- Ճշտապահություն,
- Համագործակցություն,
- Բարձր առաջադիմություն,
- Հավատարիմ ընկերներ,
- Հմակարգչային խաղեր:

Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ աշակերտների զգալի մասը նախապատվությունը տալիս են հայրենասիրություն, ազգային խորհրդանիշներ, ազնվություն, ընկերասիրություն, հաղորդակցում, համակարգչային խաղեր արժեքներին. նրանց համար կարևոր են նաև բարձր առաջադիմությունը, հավատարիմ ընկերները, քաղաքավարությունը

Բնականաբար արժեքների դասակարգման մեջ առաջին շարքերում են համակարգչային խաղերը: Կրտսեր դպրոցականները որոշակիորեն նախապատվություն էին տվել բարոյական և սոցիալական արժեքներին՝ բարեկիրթ վերաբերմունք, քաղաքավարություն, ընկերասիրություն, համագործակցություն և այլն: Նաև բացահայտվեց, որ ընդհանուր առմամբ իմացական-ճանաչողական արժեքներն առաջնային չեն. ակնհայտորեն դպրոցականները չեն նախընտրում ընթերցանությունը, արվեստի ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրասիրությունը, համագործակցությունը, ազգային խորհդանիշների իմացությունը: Սա թույլ է տալիս եզրակացնելու, որ տեղեկատվական տեխնոլոգիաների հարաճուն ներդրումներն էականորեն փոխում են դպրոցականների կենսակերպը՝ միաժամանակ նրանց որոշ չափով մեկուսացնելով, քանի որ այնպիսի արժեքներ, ինչպիսին են համագործակցությունն ու հանդուրժողականությունը, ցանկի վերջին տեղում են: Նրանց կողմից կարևորվում են նաև բարոյական արժեքները՝ հավատարմությունը, նվիրվածությունը, ազնվությունը, ճշտախոսությունը:

Առաջին դասարանում իրականացվեց ճեպահարցում, բացահայտելու համար սոցիալական և բարոյական արժեքների ձևավորվածության աստիճանը «Ժ» տառի ուսուցման շրջանակներում՝

գիտելիք → կարողություն → հմտություն → արժեհամակարգ համակարգում հետևյալ փուլերով.

1-ին փուլ

Պարզել աշակերտների նախնական պատկերացումները «ընկերություն», «ընկերասիրություն» հասկացությունների վերաբերյալ:

Առաջին դասարանում աշակերտներին տրվեցին հետևյալ հարցերը.

Հարցաշար 2

1. Ո՞վ է քո ընկերը:
2. Քանի: ընկեր ունես:
3. Դու ի՞նչ կանես քո ընկերջ համար:
4. Դու սիրում ես ընկերություն անել քեզանից՝

ա. Թույլի հետ

բ. Ուժեղի հետ,

գ. Փոքրի հետ,

դ. Մեծի հետ:

5. Ո՞վ է լավ ընկերը:

Պատասխանները ներկայացված են թիվ 1 հավելվածում:

2-րդ փուլ

Աշակերտներին տրվեցին հետևյալ առաջադրանքները՝

1. Այբենարանի «Ժլատ ընկերը» տեքստի ընթերցում և քննարկում:
2. Ընկերասիրության վերաբերյալ պատմվածքի, առակի, բանաստեղծության ընթերցում:
3. Զրույց այդ առաջադրանքների շրջանակներում (տես հավելված 1):

3-րդ փուլ

Աշակերտներին բաժանեցինք երեք խմբի և հանձնարարեցինք լրացնել քառաբաժանը (գծապատկեր 1)՝

Գծապատկեր 1



4-րդ փուլ

Իրականացվեց երեք խմբի կարծիքների հավաքագրում և դրանց հիման վրա մեկ ընդհանուր «Լավ ընկեր» մոդելի ստեղծում (գծապատկեր 2):

Գծապատկեր 2



Ավարտական աշխատանքի շրջանակներում մենք առանձնացրել ենք նաև այն տեքստերն ու առաջադրանքները, որոնք ընդգված արժեկողմնորոշիչ նշանակություն ունեն, ընդլայնում են կրտսեր դպրոցականների աժեքային պատկերացումները, դաստիարակչական մեծ ներուժ ունեն: Այդպիսի տեքստեր են օրինակ՝ առաջին դասարանում Հ.Հայրապետյանի «Հայրենի գյուղը», Պ.Խաչատրյանի «Հայաստան»:

Երրորդ դասարանի մայրենիում Սուրեն Մուրադյանի «Իմ դասագրքերը», Հովհաննես Թումանյանի «Ամենից լավ տունը», «Սասունցի Դավիթ», Ռուբեն Ղարիբյանի «Անտառի բնակիչները», Հովհաննես Շիրազի «Հայոց հրաշքը» և ընդհանրապես մայրենիի դասագրքերում տեղ գտած հեքիաթներն ու ասացվածքները: «Ես և շրջակա աշխարհը» առարկայից «Ընկերություն», «Վատ ընկերը», «Իմ վարքը», «Միջավայրը որտես ես ապրում եմ», «Իմ առօրյան», «Ինչպես կազմակերպել հանգիստը», «Ինպես եմ որոշում կայացնում », «Մեր առողջությունը» և այլ թեմաներ:

Ստացված պատասխանների վերլուծությունը ցույց է տվեց, որ դպրոցականները առավելապես լիարժեք են պատկերացնում բարոյական և գեղագիտական արժեքները (բնության գեղեցկությունների ընկալում, անձնային հատկանիշներ և այլն), մինչդեռ բավականաչափ ձևավորված չեն ճանաչողական, սոցիալական, հաղորդակցական արժեքները: Ակնհայտ է, որ կրտսեր դպրոցականները բավականաչափ չեն արժևորում միջանձնային հաղորդակցման, լեզուների իմացության, ընթերցանության, բնապահպանական խնդիրների՝ իրենց հասկացողությանը մատչելի տեղեկատվության ձեռքբերման կարևորությունը:

Տեքստերի որակական վերլուծությունից հետո մենք փորձել ենք ստացված տվյալները ներկայացնել քանակական ցուցանիշներով, այսինքն՝ տոկոսային տվյալներով արտահայտել իմացական-ճանաչողական, հաղորդակցական, գեղագիտական, սոցիալական, բարոյամշակութային և այլ արժեքների արտահայտվածությունը նրանց խոսքում, նոր բառապաշարի, պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառումը, դատողական վերաբերմունքը,

ինքնուրույնության աստիճանը, խոսքի սահունությունը, կապակցվածությունը, տրամաբանականությունը:

Ընդհանուր վերլուծությունները ցույց են տվեցին, որ աշակերտների գրեթե 40.2%-ը սահմանափակվել է սոսկ տրված բառերի սահմաններում առանձին նախադասություններ գրելով, 14.4%-ը տեքստը հարստացրել է գեղարվեստական բառապաշարով, 13.2%-ը արտահայտել է գնահատողական դատողություններ, 32.2%-ի նկարագրական բբնույթ ուներ՝ չարտահայտելով արժեքային-գնահատողական վերաբերմունք:

Ընդհանուր առմամբ 32% հարցվածների պատասխաններում մտքերը կրկնվում են, միօրինակ են, անհույզ: Քանի որ մենք առաջարկել էինք բնագրերը կառուցել ըստ նախընտրած բառաշարքերի, ուստի աշակերտների մեծ մասի շարադրանքը տրվել ՝ նկարագրական բնույթի էր , չափազանց սակավ էր գնահատողական բնագերը:

5-ից ավելի բառաշարքերի շուրջ տեքստեր է հյուսել ստուգիչ խմբերում հարցվածների 16%-ը, փորձնական խմբերում՝ 21%-ը, 4-5 բառաշարքերի շուրջ՝ համապատասխանաբար 23%-ը և 28%-ը, 2-4 բառաշարքերի շուրջ աշխատել է ստուգիչ խմբերում հարցվածների 31%-ը և փորձնական խմբերում՝ 35%-ը, 1-2 բառաշարքերի վերաբերյալ աշխատանք է ներկայացրել համապատասխանաբար 25%-ը և 14%-ը: Ստուգիչ խմբերում 5%-ը և փորձնական խմբերում 2%-ը չի կատարել առաջադրանքը:

Մեր փորձարարական դասերի ընթացքում փորձնական խմբում նպատակաուղղված կիրառեցինք զրույցների, դերային և գործնական խաղերի, իրավիճակների կամ դեպքի վերլուծության, ինքնուրույն և գրավոր աշխատանքների, բնագրերի շուրջ առաջադրանքների կատարման, արտադասարանային ընթերցանության ինչպես նաև համագործակցային, խաղային և փոխներգործուն տարբեր մեթոդներ:

Փորձարարական դասերի ընթացքում մենք բավականաչափ դրական փոփոխություններ արձանագրեցինք երեխաների իմացական-ճանաչողական, արժեքային-գնահատողական, հուզակամային, վարքային-գործունային ոլորտներում: Եթե փորձարարության սկզբում նրանք դժվարությամբ էին ներգրավվում մեր կազմակերպած զրույցներում, խուսափում էին դատողություններ անելուց կիրառված փոխներգործուն մեթոդների, խաղային, համագործակցային տեխնոլոգիաների, ստեղծագործական առաջադրանքների արդյունքում երեխաները սկսեցին մեծ հետաքրքրություն են դրսևորել հատկապես ընթերցանության նկատմամբ՝ հուզական-գնահատողական վերաբերմունք դրևորելով ընթերցած նյութի, հերոսների արարքների, գործողությունների նկատմամբ, վերլուծելով, համեմատելով,

ընդհանրացնելով ու համապատասխան հետևությունների հանգելով: Բավականաչափ դրական փոփոխություններ կան երեխաների ճանաչողական ու տեղեկատվական ոլորտներում. նրանց մեծմասնությունը ձգտում է ինքնուրույն գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը, համացանցից ձեռք բերել, ուսումնական թեմաներին առնչվող տեղեկատվություն, դրանց նկատմամբ համարժեք վերաբերմունք ձևավորել: Սա վկայում է, որ ընդլայնվել են նաև գեղագիտական արժեքների վերաբերյալ պատկերացումները. աշակերտներն ընկալում են գեղեցիկը, բանաստեղծականը, գեղարվեստական որոշ բնագրերին առընչվող արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ տեղեկատվության կուտակում:

Էական փոփոխություններ են նկատվեցին նաև սոցիալական, հաղորդակցական արժեքների յուրացման տեսանկյունից: Խմբային աշխատանքների կիրառման արդյունքում նկատելի էր հաղորդակցական, համագործակցային կարողությունների, թիմային աշխատանքի հմտությունների զարգացման և որոշակի առաջընթաց: անձնային մի շարք հատկանիշների՝ պատասխանատվության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության պատրաստակամության, դիմացինին լսելու կարողություն, աշխատասիրության, կարգապահության որոշակի առաջընթաց:

Փորձարարական դասերից հետո մենք ստուգիչ և փորձնական խմբերում կրկին կիրառեցինք «Հինգ բոպեանոց ազատ շարադրանք» մեթոդը՝ բացահայտելու համար, թե կան արդյոք դրական տեղաշարժեր առաջադրանքի կատարմանը ներկայացվող չափանիշների տեսանկյունից (կապակցված խոսք կառուցելու կարողությունը, բառօգտագործման հմտությունները և այլն:

Այսպես, օրինակ, եթե փորձարարության սկզբում ստուգիչ խմբում հարցվածների 16%-ը և փորձնական խմբերում 21%-ը աշխատել է 5 և ավելի բառաշարքերի շուրջ, ապա փորձարարության վերջում արդյունքը կազմում է համապատասխանաբար 20% և 27%, 4-5 բառաշարքերի շուրջ արդյունքները հետևյալն են՝ փորձարարության սկիզբ՝ 23% և 28%, փորձարարության վերջ՝ 26% և 33%, փորձարարության սկզբում ստուգիչ խմբերում 2-4 բառաշարքերի շուրջ աշխատել է 31%-ը, փորձնական

խմբերում՝ 35%-ը, փորձարարության վերջում տվյալները կազմում են համապատասխանաբար 34% և 36%, 1-2 առաջադրանք է կատարել փորձարարության սկզբում ստուգիչ խմբերում 25%-ը, փորձնական խմբերում՝ 14%-ը, փորձարարության վերջում տվյալները կազմում են համապատասխանաբար 18% և 4%: Եթե փորձարարության սկզբում ստուգիչ խմբերում 5%-ը և փորձնական խմբերում 2%-ը չի կատարել առաջադրանքը, ապա փորձարարության վերջում առաջադրանքը ստուգիչ խմբերում չի կատարել 2%-ը, փորձնական խմբերում բոլորը կատարել են:

Աղյուսակ 1-ում ներկայացված են բառաշարքերի շուրջ աշխատանքում ստուգիչ և փորձնական խմբերում ընդգրկված դպրոցականների մասնակցության ցուցանիշները փորձարարության սկզբում և վերջում

Աղյուսակ 1

Կրտսեր դպրոցականների բառաշարքերի շուրջ կատարած աշխատանքի արդյունքները փորձարարության սկզբում եվ վերջում (% -ով)

№	Մասնակցութ. Ցուցանիշները	Ստուգիչ խումբ		Փորձնական խումբ	
		Փորձ. սկիզբ	Փորձ. վերջ	Փորձ. սկիզբ	Փորձ. վերջ
1	5 և ավելի բառաշարքեր	16	20	21	27
2	4-5 բառաշարքեր	23	26	28	33
3	2-4 բառաշարքեր	31	34	35	36
4	1-2 բառաշարքեր	25	18	14	4
5	Ոչ մի բառաշարքեր	5	2	2	-



Տրամագիր 1 Կրտսեր դպրոցականների բառաշարքերի շուրջ կատարած աշխատանքի արդյունքները ստուգիչ խմբում փորձարարության սկզբում եվ վերջում (% -ով):



Տրամագիր 2 Կրտսեր դպրոցականների բառաշարքերի շուրջ կատարած աշխատանքի արդյունքները փորձնական խմբում փորձարարության սկզբում եվ վերջում (% -ով):

Դիտարկված են ստուգիչ և փորձնական խմբերի արժեքային նախընտրությունները ըստ թեմատիկ արժեխմբերի:

Աղյուսակ 2

Կրտսեր դպրոցականների արժեքային նախընտրություններն ըստ թեմատիկ արժեխմբերի (%-ով)

№	Չափանիշներ	Ստուգիչ խումբ 1	Փորձնական խումբ 2
1	Բնապատկերների բանաստեղծական–գեղագիտական ընկալում	30	32
2	Հայրենասիրություն, հայրենիքի խորհրդանիշների, պատմական հուշարձանների իմացություն	22	23
3	Ընթերցանություն, լեզուների իմացություն, ճանապարհորդություն	13	14
4	Բնապահպանություն, հոգատարություն կենդանական աշխարհի նկատմամբ	15	16
5	Հաղորդակցում, նվիրվածություն, ընկերասիրություն	12	9
6	Տարբեր ոլորտների վերաբերյալ գիտելիքներ, ստեղծագործություն, մրցակցություն	8	6



Տրամագիր 3 Կրտսեր դպրոցականների արժեքային նախընտրություններն ըստ թեմատիկ արժեխմբերի (%-ով)

Այսպիսով, ավարտական աշխատանքի շրջանում մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարրական դպրոցի 1-4-րդ դասարաններում մայրենիի, մաթեմատիկայի, «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսուցման ընթացքում արժեկողմնորոշիչ տեքստերի և առաջադրանքների, ուսուցման փոխներգործուն մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների արժեհամակարգի և արժեքային կողմնորոշումների ձևավորման արդյունավետության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Կրտսեր դպրոցականների կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման, անձի և հասարակության համար դրանց նշանակության գիտակցման հրամայականը պահանջում է դեռևս տարրական դպրոցի կրթական գործընթացում խորապես հաշվի առնել ուսումնական առարկաների արժեքային ներուժը:
2. Մայրենի, Մաթեմատիկա, «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ» առարկաների ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման միջոցներ են՝ արժեկողմնորոշիչ բնագրերը, առաջադրանքները, առակները, ասացվածքները, թեմաները, էքսկուրսիաները, սահիկահանդեսները, ուսուցողական տեսֆիլմերը, սովորողների ստեղծագործական աշխատանքները:
3. Մայրենի, մաթեմատիկա, «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ» առարկաների ուսուցման գործընթացում արժեկողմնորոշիչ թեմատիկ նյութերի ընտրության և մեթոդական համալիրի մշակման համար պետք է առաջնորդվել արժեքների ընտրության, դասակարգման և խմբավորման սկզբունքներով՝ ըստ կրտսեր դպրոցականների ուսումնական նպատակների:
4. Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության չափանիշներն են շրջապատի նկատմամբ գնահատողական վերաբերմունքը, նրանց կողմից մշակութային արժեքների ընկալումն ու իմաստավորումը, իրադրությանը համարժեք հույզերի, խոսքի և վարքի դրսևորումը:
5. Մայրենի, մաթեմատիկա, «Ես և շրջակա աշխարհը», «Կերպարվեստ» առարկաների ուսուցման գործընթացում ժամանակակից փոխներգործուն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների արդյունավետ ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, - Եր.: Հայաստան, 1976, - 925 էջ:
2. Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ն.Զ., «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, Արտագերս, 2016, -226 էջ:
3. Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները, Երևան, Արտագերս, 2009, 335 էջ:
4. Ասատրյան Լ.Թ. և ուրիշներ, Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017, 360 էջ:
5. Համագործակցային ուսուցում /Հովհաննիսյան Ա. և ուրիշներ/, Եր.: Անտարես, 2006.-123 էջ:
1. Բարոյագիտական բառարան (Խմբ. Ի.Ս. Կոնի), - Եր.: Հայաստան, 1985, - 455 էջ:
2. Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, - Եր.: Զանգակ-97, 2006, -328 էջ:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3. - Եր.: Էդիթ Պրինտ, 2008, -160 էջ:
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4. - Եր.: Էդիթ Պրինտ, 2010, -192 էջ:
5. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ,- Եր.: Ան-Զոն, 2011, -160 էջ:
6. Խաչատրյան Հ. Հ., Հացապատում , - Եր.: Հայաստան, 1984, - 184 էջ:
7. Համագործակցային ուսուցում : Ձեռնարկ / Ա. Հովհաննիսյան և ուրիշներ, - Եր.: Անտարես, 2006, -124 էջ:
8. Հայ մանկավարժներ (Կազմեց և խմբագրեց պրոֆ. Ա.Մ. Շավարշյան), գիրք Ա, - Եր.: Հայպետուսմանկհրատ, 1958, - 622 էջ:
9. Հարությունյան Ս. Բ., Հայ հին վիպաշխարհը, - Եր.: Արևիկ, 1987, -180 էջ:

10. Միքայելյան Հ. Ս., Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը.- Եր.: Էդիթ Պրինտ, 2011, -184 էջ:
11. Նալչաջյան Ա.Ս., Հոգեբանական բառարան, - Եր.: Լույս, 1984, - 237 էջ:
12. Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա (կրթակարգ չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր, նոր մեթոդներ), - Եր.: ԿԱԻ հր., 2006, - 148 էջ:
13. Տեր-Գրիգորյան Ա.Շ., Հայոց լեզվի մեթոդիկա (տարրական դասարաններ), - Եր.: Լույս, 1980, - 563 էջ:
14. Տոնոյան Ա. Լ., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդիրը լեզուների ուսուցման գործընթացում // Մանկավարժական միտք. – 2007. – հմ. 3-4. - էջ 19-28:
15. Տոնոյան Ա. Լ., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի կազմակերպման գիտական նախադրյալները լեզվական ցիկլի առարկաների ուսուցման ընթացքում // Մանկավարժություն. – 2008. – հմ. 3-4. - էջ 16-25:
16. Տոնոյան Ա. Լ., Արժեքների ձևավորման խնդրի արտացոլումը տարրական կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում // Մանկավարժություն. – 2011. – հմ . 6. - էջ 15-20:
17. Ուշինսկի Կ. Դ. , Մանկավարժական ընտիր երկեր, 2 հատորով, հ. 2, - Եր.: Հայպետուսմանկհրատ, 959, - 813 էջ:
18. Փիլիսոփայական բառարան, - Եր.: Հայաստան, 1975, - 467 էջ:
19. Քյուրքչյան Ա. Ն. , Տեր Գրիգորյան Լ. Ս. , Մայրենի 1: Հանրակրթական դպրոցի 1-ին դաս. դասագիրք/ - Եր.: Էդիթ Պրինտ, 010, - 64 էջ:
20. Քյուրքչյան Ա. Ն. , Տեր Գրիգորյան Լ. Ս. , Մայրենի 2: Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք/ - Եր.: Էդիթ Պրինտ, 2010, -160 էջ:
21. Артюхов И.С. Ценности и воспитание /И.С. Артюхова // Педагогика.-1999.-N 4. - С. 117-121.